

— Նմանապէս, հայրն իմ ոչ գիտէր զլեզու եւ ոչ անկաւ ի ցանձա ձեր, միայն թէ քանիցս անգամ պատահեցաւ նմայ առ եւ տուր առնել ընդ ձեզ: Քանզի դուք ի սկսբանէ /208b/ ոչ խաբէք, այլ հանգոյն կարճաց նախնուն շողոքորթէք, ապա թէ խայթէք եւ սպանանէք: Եթէ ի սկսբանն խայթէք, ոչ ոք անկանէր ի ցանձա ձեր, բայց էս 40 ամօք ծառայեցի ձեզ, տեսի աչօք իմօք եւ քննեցի բազմիցս, որ ոչ գոյ ի ձեզ ճշմարտութիւն: Ի սկսբանն շողոքորթէք, որպէս որ ասի, վերջն խայթէք, եւ որպէս որ մեղուն գարնան ժամանակին կարգէ զմշակս վասն բերելոյ զծաղիկս եւ խոտանայ նոցա կերակրել ձմեռան մեղրաւ, բայց չերբոր սպառի ծաղիկն ի վայրեացն, տեսանէ, որ այնուհետեւ պարտի կերակրել զնոսա, այնժամ գտանէ պատճառ մի եւ կոտորէ զնոսա ի փեթակէն ի դուրս, եւ ինքեանք միայնակ ուտեն զվաստակս նոցա: Սոյնգունակ գործս գործողին արժան է ասել, թէ չեն քրիստոնեայ եւ կամ թէ գոյ ի նոսա ճշմարտութիւն:

Հ. Ընդ յորո՞ւմ մեր այնպէս արարաք, բանէցուցաք եւ ի ժամանակս վարձուցս հանաք զնայ ի մէնճ յունայն:

Պ. Ընդ բազմաց, որ ոչ կարեմ թուել զնոսայ, մի ըստ միող, զորս տեսի աչօք իմօք եւ լուայ, թէ զրկեալն ի կրօնաւորացն ձերոց եւ թէ ի աշխարհականացն, բայց զերիս ի նոցանէ յայտ ածից այսր, որ է յոյժ երեւելի:

— Նախ յոյն թարգմանն՝ մուսի Պատերան, որ եղեւ պալիօզ¹⁴ Շիրազու, սայ, որ գործէր իւր ամենայն գործն կատարելութեամբ եւ գորովի արդեամբք: Տեսանէյին զնա /209a/ ձեր ազն եւ շարանային, նախանձէյին, ընդդէմ նորա գրէյին առ դուռն թագաւորին եւ մատնէյին զնայ ի զուր եւ ազգն ձեր միշտ հակառակէյին նմա ի ամենայն գործս նորա, որքան որ Պարսից յերկիրն շէն էր: Իբրեւ որ անկաւ տէրու-

թիւն ի ձեռն Աղուանից¹⁵, առաքեցին զնայ ի Հնդիկս, անդ ծառայեաց թագաւորին ժամանակ մի: Տեսին, որ շատ յաւելաւ, կոչեցին զնայ ի Փարէզ, առ ի առնուլ զհամարս ի նմանէ, արարին զնայ պարտական, որ թշուառապէս ապրեցաւ եւ քաղցած մեռաւ անդ, մնաց առանց պատանաց¹⁶:

— Երկրորդն թիֆլիսեցի Պաղի Փօխլունց թարգման Ներսէսն, իբրեւ որ մառչիլիացի Անժ մուսի Գառտանն¹⁷ գայր դեսբանութեամբ ի Պարսս խնդրեց ի Թիֆլիսու քափուշինացն, զի առաքեն առ նայ այր ոմն հմուտ, որ կարիցէ տնօրինել յամենայն գործոց իւր: Առաքեցին այս վերոյ յիշատակեալ Ներսէսն, ծառայեաց դեսբանին ամենայն շնորհօք, ամենայն ճշմարտութեամբ եւ ամենայն իրօք կատարեալ¹⁸, այնքան ավելելօվ ծախէր զգրամն դեսբանին,

15 Նկատի ունի 1722 թ. աֆղանների արշավանքը դէպի Սպահան եւ Պարսից շահի գահազրկումը:

16 Եւրոպացի պատմաբանները, վերջին տասնամեակներին, մեծ ուշադրութիւն դարձրին Արեւելքում աշխարհիկ եւ հոգեւորական եւրոպացիների գործունէութեան ուսումնասիրմանը: Այդպիսի ուսումնասիրութիւններից մասնաւորապէս տե՛ս *Européens en Orient au XVIII^e siècle*, Paris: L'Harmattan, 1994 (*Moyen Orient & Océan Indien XVI^e-XIX^e s.*) յօդուածների ժողովածոն:

17 Ange de Gardane - Գարդանի դեսպանագնացութեան մասին մանրամասն տե՛ս **Anne Kroell**, *Louis XIV, la Perse et Mascate*. - *Le Monde Iranien et l'Islam. Sociétés et cultures*, Paris: Société d'Histoire de l'Orient, IV, 1976-1977, pp. 57-78 (յաւակապէս Les Mission de Gardane et de Padery բաժինը)

18 Գարդանին ամենայն հաւատարմութեամբ ծանփում էին զանազան հայեր: Նոյնիսկ անձնական քարտուղարն ու թարգմանիչը հայազգի Յովսէփ Աբիալովեանն էր (տե՛ս *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz concerning the Afghan Invasion of Persia in 1722, in Siege of Isfahan and the Repercussions in Northern Persia, Russia and Turkey*, Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and additional Notes by Laurence Lockhart, Lisbon, 1988, p. 4): Եղիա Մուշեղեանի եւ Գարդանի ունեցած փոխադարձ գրագրութիւնը հրատարակուած է «Եղիա Կարմեցու դիւանը» փաստաթղթերի ժողովածոյում:

14 Baille – պալլ, պալեօզ: Սկզբնապէս այսպէս էր կոչում վեմետիկեան դեսպանը Օսմանեան կայսրութիւնում (Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, Կոստանդնուպոլիս, 1884, էջ 121):